## ՓԱՍՏԱԲԱՆ ԼԵՎՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է «ՄԱՐՄԱՐԵ ԱՐԾԻՎ» ՄՐՑԱՆԱԿԻՆ

06.11.2019 16:21

«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» աշնանային եթերաշրջանի լավագույն խաղացող է ճանաչվել  փաստաբան, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղի փաստաբանների թիմի անդամ **Լևոն Սահակյանը**:

Խաղի ավագների և հովանավորների քվեարկության արդյունքում աշնանային եթերաշրջանի լավագույնն է ճանաչվել Սողոմոն Թեհլերյանի մասին Լևոն Սահակյանի կողմից ներկայացված հարցը: Փաստաբանն արժանացել է «Մարմարե արծիվ» մրցանակին: Լևոն Սահակյանի  հարցը վերաբերել է հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի 20-րդ դարասկզբին կատարած սխրանքին ու դրանից հետո արված մի լուսանկարի պատմությանը:

Խաղի ընթացքում հարցը հնչեցվել է հետևյալ կերպ.
*«Այս լուսանկարն արվել է նախորդ դարի 50-ական թվականներին: Տարիներ անց Խորհրդային Հայաստանի պարբերականներից մեկում տպագրված հոդվածում նշվում է, որ երբ այս տղամարդը դիրք է ընդունում ֆոտոխցիկի առջև, լուսանկարիչն առաջարկում է նրան լուսանկարվել նման դիրքով:*

**Հարց:**
*Ո՞վ է լուսանկարում պատկերված տղամարդը:*

**Պատասխան:**
*Երբ տղամարդը դիրք է ընդունում ֆոտոխցիկի առջև, լուսանկարիչն առաջարկում է առաջ պարզել այն մատը,*
*որով սեղմել էր ատրճանակի ձգանը՝ Թալեաթ փաշային գնդակահարելիս:*

*Այդ մարդը Սողոմոն Թեհլերյանն է:»*

Լևոն Սահակյանը, բացի «Մարմարե արծիվ» գլխավոր մրցանակից, պարգևատրվել է 300 հազար ՀՀ դրամով և հաղորդման հովանավորների կողմից ստացել է մի շարք այլ արժեքավոր մրցանակներ։



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })